

Իրավունք

Մշակույթ

Չկա Հասարակության Թշուշ
անուանյալ իրավունքների
Ubi societas ibi ius

Երկշաբաթեր
թիվ 5 (8)
2007 թ. ապրիլի 16

ԱՊԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄՅԱՐԻՑ ՍԻՆՉԵՎ ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ԲՈՊԵՆԵՐ

Երբ հարկ չկա խոսելու, գրուցելու, հաղորդակցվելու, այսինքն միայնության մեջ ենք, քվում է՝ անբառ ու անխոս մեր մտածումը անլեզու է գրեթե:

Սակայն երբ կա հարկն ու անհրաժեշտությունը՝ ընտանիքում ու ընկերական շրջապատում, աշխատավայրում, շուկաներում ու խանութներում, ծանոթի ու անծանոթի հետ, մի խոսքով՝ հանրային միջավայրում, ի՞նչ լեզվով և ի՞նչպե՞ս ենք արտահայտվում: Սեփական գրականից ասես ամաչելով՝ հաճախ, իհարկե, «տնավարի», մտերմաբար ու մտերմաբառ, գորովահաղորդ իբրև՝ սովորական դարձած ջան ու ջիգարով, և սա, անշուշտ, բարի-դրացիական հարաբերություններում միայն: Իսկ ջղային, անբարյացակամ, անհանդուրժ ու քննամական թեժ շփումներում. կարելի է ասել՝ էլ վավել «տնավարի», բայց ամենամեղակալելի գոեկափայլ բառ ու բանով արդեն, հայտնական զագրասուն ճոխությամբ...

Մինչդեռ ինչպե՞ս ենք սերտում օտար լեզուները՝ չտեսնված ջանասերի ի՞նչ մաքրամաքուր քերականությամբ ու առողամնությամբ, և չենք ամաչում այլազգիների մոտ «կուլտուրական» երևալ:

Պատահաբար չէր, որ **տնավարի** բառը երկու դեպքում էլ չակերտների մեջ առա, որովհետև տունն է այն սկիզբն ու մեկնակետը, որ մեր **լեզվական** հետագա շարունակությունն է ենթադրում ընտանիքից մինչև մանկապարտեզ ու դպրոց, հետագայում, զուգահեռաբար, մինչև այլևայլ ուսնաստատություններ ու բանակ, մինչև աշխատավայր, ընդհանուր առմամբ՝ մինչև հեթանոսական **կարևոր միջոցառում**:

Վերջինիս պարագայում, թող ներվի ասել, **մայրենի լեզվի** բախտը միանգամայն բերում է, և հորեյանական հանդիսավոր շուք ու շվաքների տակ չարքաշ մտավորականներիս ճակատագիրն էլ է առժամանակ գոհանում... Իսկ հիշյալ **բախտ ու ճակատագրով** նույնիսկ մտովի չմտահոգվողները՝ ապագային խունհարի հիմնադիր խրախճանողները, թեև սթափություն րոպեներ են ապրում, բայց և այնպես իրենց մըշտական մատակարարների՝ հեռուստատուղիների և որոշ լրագրողների ու զբոսորդների հետ զլուխ չեն հաճում ՅՐԱՆՏԻ **գորղական խոստովանանքից...**

Այսուհանդերձ, ազգային սթափությամբ փա՛ռք տանք Աստուծոն, որ շարունակաբար Մեծեր ու Մեծամեծեր, նաև՝ օրհասական, բայց և սղիտալի Իրադարձություններ է ընծայում հայերիս, դրանով իսկ՝ պատմական ու պատվական Տոներ և Հանդիսություններ, որոնց հայրենաշունչ առկայությանն ապահովաբար խարսխվելով՝ համաշխարհի խորաբաց ամատակներում երբեք չի խորտակվում մեր անփոխարինելի Ամենագնացը՝ **ՀԱՅՈՒՆ ԼԵՁՈՒՆ**, որի յուրաքանչյուր լուսարձակումը նաև բանաստեղծություն է:

Հ Ո Ն Վ Ա Ս Յ Ո Ն

Ես Հուշայում կանգնեցրի այբբենակերտ –
Բեկորներով բիրիլիական ընթացիկի
Կոթողն ի վեր՝ թևատարած մի թռչնակերպ –
Երկնամխորհուրդը բյուրեղներից իմ քանքարի:

Սաղմոսելով խոյանքի մեջ խաղաղ ու խոր,
Աչքը հառած Հորացիոսին իր մտերիմ՝
Խա՛ղ է խաղում խալիսի գլխին խոնճափոր,
Ի տրիտուր ներդաշնությանն ու գյուտերին...

Ես Հուշայում կանգնեցրի... Ներհակավոր
Գլուխի պես հավատարիմ յուր մյուսերին՝
Ապրած կենա Քերթությունը մեր թագավոր, –
Թոթափվում են թրթաթաթար թյուրն ու թրինի:

ՀՐԱՅՍԱ ՍԱՐՈՒՆԱՆ

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

...Այս սիրելի-սարսափելի, խելացի-խելագար, հասկանալի-խճճված աշխարհում դաժան բան է մերկ լինել, լինել աշխարհի մերկացած նյարդը՝ գրող:

Սպիտակ թղթի առջև ամեն վայրկյան կարելի է կաթվածահար լինել:



ԱՍՏՂԻԿ ԲԱԼԱՅԱՆ

Արտասովոր դպրոցը

ԵՐԵՎԱՆԻ «ԲՅՈՒՐԱԿՆ» ԿՐԹԱՆԱՍԱՆԻՐ

Երևանի «Բյուրակն» կրթահամալիրը նման չէ Հայաստանում գործող հանրակրթական դպրոցներից և ոչ մեկին: Այստեղ աշխատում է իրական կյանքի մոդելը. սովորողները ոչ թե պատրաստվում են ապագա կյանքին, այլև՝ ապրում են այդ կյանքը դպրոցում: «Բյուրակնում» չկան դասեր ու դասարաններ, գանգ ու դասամիջոց, բայց միևնույն ժամանակ՝ չկան անգործ, ազատ մարդիկ: Այստեղ յուրաքանչյուր ոչ՝ ուսուցիչ թե աշակերտ, և՛ սովորում է, և՛ սովորեցնում, և՛ կազմակերպում ուսումնական գործընթացը: Կրթահամալիրն ունի իր կարգախոսը՝ «Սովորեցրու՛, որ սովորես», որով էլ շուրջ երեք տարի իրականացնում է հայ մանուկներին կրթելու իր առաքելությունը: Կրթահամալիրի գործադիր տնօրենն է Վահրամ Դազարյանը, իսկ գիտական ղեկավարը՝ Կրթության ազգային ինստիտուտի Մանկավարժության գիտահետազոտական բաժնի վարիչ Մամուկ Մկրտչյանը:

Կարողի ստեղծման անհրաժեշտությունը:
2004 թվականի մայիսի 27-ին կյանքի կոչվեց Հայաստանի Հանրապետության հանրակրթության պետական կրթակարգը, որի գլխավոր նպատակը յուրաքանչյուր անհատի որակյալ կրթության ապահովումն է:

Կրթակարգով սահմանվել է կրթության բովանդակությունը՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ամբողջությունը, որին պարտադիր պետք է տիրապետի հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր շրջանավարտ (1, էջ 25):

Կրթության բովանդակության «կարողություններ և հմտություններ» բաղադրիչը կազմված է ճանաչողական, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական և ինքնուրույն գործունեության ենթաբաղադրիչներից: Սովորողի մեջ դրանց ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ, կիրառել նպատակային ընտրված մեթոդներ: Այսօր փորձ է արվում տարբեր ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ ուսուցման գործող եղանակի պայմաններում իրականացնել կրթության բովանդակության յուրացումը:

Դրանք որոշակի ակտիվություն հաղորդում են ուսուցման գործընթացին, սակայն յուրաքանչյուր սովորողի համար չեն ապահովում որակյալ կրթություն:

Բացի այդ, ուսուցման արդյունքը մեծապես կախված է նաև սովորողների անհատական առանձնահատկություններից: Գաղտնիք չէ, որ բոլոր երեխաները տարբեր են: Այդ տարբերությունները արտահայտվում են նրանց ընդունակություններում, մտածելակերպում, ունեցած գիտելիքների ծավալում, հոգեբանական առանձնահատկություններում, գործունեության ձեռք բերած եղանակներում և այլն (3, էջ 104): Մտագործունեության այդ միջոցները երեխաներից ամեն մեկն իր ձևով է օգտագործում՝ որոշակի նպատակների հասնելու կամ ծագած խնդիրները լուծելու համար: Հարցն այն է, թե ինչպիսի՞ն հնարավորություններ են տրված աշակերտներին՝ օգտագործելու համար իրենց միջոցները:

Հետևաբար, հասունացել էր պահը՝ ուսումնական պարապմունքների կազմակերպման այնպիսի ձևեր ստեղծելու, որոնք հնարավորություն կտային սովորողներին օգտագործելու իրենց անհատական առանձնահատկությունները՝ որպես ուսուցման բովանդակությունը բավարար մակարդակով յուրացնելու միջոցներ: Իսկ ուսուցման բովանդակությունը բավարար մակարդակով յուրացնելու համար յուրաքանչյուր սովորող պետք է մշտապես գտնվի ակտիվ գործունեական վիճակում, ինչը հնարավոր չէ գործող խմբային ուսուցման եղանակի պայմաններում:

Հիմքում ունենալով հաղորդակցման խմբային ձևը, երբ մեկն իր միտքը, ասելիքը հաղորդում է միանգամից ամբողջ խմբին՝ խմբային ուսումնական պարապմունքները բացառում են անհատական մտեցման հնարավորությունները:

Վերոնշյալ խնդիրների մտահոգությամբ էլ ստեղծվեց «Բյուրակն» կրթահամալիրը և դարձավ կրթության պատմաստարակական զարգացման հաջողոր աստիճանին՝ կուլեկտիվ ուսուցման եղանակին, անցնելու կամային:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԵՆԴԱՆՈՒՐ ԶԱՐՈՉԱՐՉԱՎ (ԱՀԷՔ) Global Call to Action Against Poverty (GCAP)

«Աղքատության հաղթահարման համաշխարհային քարոզարշավ»-ը (GCAP) ավելի քան 100 երկրներ ընդգրկող մի միջազգային ցանց է, որը ներառում է համայնքային խմբեր, տարբեր միություններ ու ոչ կառավարական կազմակերպություններ, հեղինակավոր անհատներ, ովքեր ամբողջությամբ նվիրվել են աղքատության դեմ պայքարին:
2006թ. միայն մեկ օրում ավելի քան 100 երկրներից 23,5 միլիոն

մարդ մասնակցեց «Ելի՛ր ընդդեմ աղքատության» քարոզարշավին:
Ամբողջ 2007-ին կոալիցիան շարունակում է պայքարել հանուն անհավասարության և աղքատության վերացման: Քարոզարշավը, ահազանալով, Սպիտակ ժապավենի ներքո բարձրակետին կհասնի Դոկտեմբերի 17-ին՝ Աղքատության հաղթահարման համընդհանուր օրը:



ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՈՒՂԻՆԵՐ

Նակատեսակավածում՝ ցույց տալու համար, թե ինչպես է դա տեղի ունենում: Հետազոտությունները հիմնականում կատարվել են Ինդոնեզիայում՝ ուսումնասիրելով 1993 - 2000 թ.թ. միջև ընկած ժամանակահատվածը: Պարզվում է, որ գյուղական համայնքների հողագործությամբ զբաղվող աղքատ բնակչության մեծ մասը, ովքեր կարողացել են խուսափել աղքատությունից, դա արել են առանց քաղաք տեղափոխվելու: Հենց գյուղատնտեսական ավարանքների գների, աշխատավարձերի և արտադրողականության փոփոխությունն է, որ էական դեր է խաղացել աղքատությունը զգալիորեն հաղթահարելու համար:
Աղքատությունից խուսափելու քաղաքականությունը ներառում է հետևյալ քայլերը.
* կառավարությունը պետք է գյուղատնտեսական արտադրողականությունը խթանող քայլեր ձեռնարկի, քանի որ դա աղքատությունից դուրս գալու հիմնական ուղին է: Դա կարող է իրականացվել գյուղատնտեսական հետազոտությունների համար

նախատեսված ծախսերի ավելացումով, գյուղական ճանապարհների բարեկարգմամբ և առավել ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառության մատչելիությանը,
* քանի որ գյուղական ոչ ֆերմերային սեկտորը ևս որոշակի դեր է խաղում, այդ սեկտորում համապատասխան ներդրումներ կատարելը բանալի է հանդիսանում աղքատությունից խուսափելու հարցում: Այն է՝ շուկայական ավելի լավ իրացում և արտադրության արտահանում,
* որակյալ կրթությունը և աղքատությունն արագ շրջանցելու լավագույն միջոցներից մեկն է: Աղքատ բնակչության համար միջոցակարգ և այնուհետև մասնագիտական կրթության մատչելիությունը պետք է լինի կառավարության՝ աղքատության դեմ պայքարի ռազմավարության անկյունաքարերից մեկը:

Քաղված է Center for Global Development (Համընդհանուր զարգացման կենտրոն) էլ. համընթաց

Տնտեսության զարգացման հիմնական իմաստը աղքատ մարդկանց նվազ աղքատ դարձնելն է: Բայց ինչպե՞ս են իրականում մարդիկ խուսափում աղքատությունից: Գոյություն ունեն մի քանի մոդելներ, որոնք փորձարկվել են որոշակի պատմական ժամա-

Աղքատության Ռեքվիեմ



Poverty Requiem

Հոկտեմբերի 17-ին համախմբման տարրերից մեկը լինելու է «Աղքատության ռեքվիեմը»:
Դա երգչախմբի և երկու մեներգիչների կատարմամբ (ալտ և սոպրանո) երաժշտական մի ստեղծագործություն է, որը բազմաթիվ մարդկանց հնարավորություն է տալիս իրենց ձայները բարձրացնելու աղքատության դեմ: Ներգրավված մարդիկ օգտագործում են այս երաժշտական մանիֆեստը՝ հրավիրելու հասարակության, լրատվամիջոցների, քաղաքական գործիչների և բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր ցանկանում են լսել այն:
«Աղքատության ռեքվիեմը» համաշխարհային երաժշտության չափանիշներին համապատասխանող վոկալ գործ է: Այն կազմված է 5 գործողությունից: Այս գործողությունները արտացոլում են աղքատության տարբեր դրսևորումները, որոնք ազդում են մարդկանց վրա՝ առաջապանք, գայրույթ, տրտմություն, ուրախություն և հույս: Նման պահերին կարճ պարային կատարումները կարող են լինել թեմայի գեղեցիկ լրացում:



Ռեքվիեմը նախատեսված է անսահմանափակ թվով երգիչներից՝ տղամարդկանցից և կանանցից բաղկացած մեծ երգչախմբի համար: Երգչախումբը բաժանված է 4 խմբի. մանկական երգչախումբ, հավաքական երգչախումբ, փորձառու երգչախումբ և տղամարդկանց երգչախումբ: Կատարման ժամանակ սպիտակ հագնված երգչախումբը կանգնում է շրջանած: Հանդիսատեսը տեղավորվում է շրջանի ներսում: Բարձրադիր բեմահարթակը գտնվում է շրջանի կենտրոնում: Հենց այստեղ է, որ կարելի է տեսնել դիրիժորին (Ռեքվիեմի երաժշտության հեղինակ՝ երգահան Փիլիպ Սայասին), երգչախմբին և, հավանաբար, փորձիկ պարային խմբին: Երկու մենակատարները հեծանվակներով հակառակ ուղղություններով պտտվում են շրջանի շուրջը:
Ռեքվիեմը (խոսք՝ Սիլվիա Բորրենիի) մի քանի տարբերակ ունի և նախատեսված է տարբեր ծայնային կատարումների համար: Ոչ ոք չի անտեսվել՝ անկախ երաժշտական հմտություններից կամ գիտելիքներից, տարիքից, սեռից կամ մշակութային հիմնքից: Մասնակիցները նյութին

կծանոթանան իրենց տներում, շնորհիվ կայքում տեղադրված տեղեկությունների, որոնք հնարավորություն կտան նվազագույնի հասցնել հնարավոր փորձերը:
«Աղքատության ռեքվիեմի» ամենաառաջին կատարումը մեծ հաջողություն ունեցավ: «Մեծ երջանկություն է երգել «Աղքատության ռեքվիեմը», երբ գիտես, թե ինչ բան է աղքատ լինելը,- ասաց կատարողներից մեկը.- Ռեքվիեմի երգեցողությունը թեթևություն է բերում»:
2000թ. ՄԱԿ-ի անդամ 189 պետությունները խստացան իսկապես հաղթահարել աղքատությունը գալիք 15 տարիների ընթացքում:
Խստտունը արձանագրվեց հազարամյակի 8 նպատակների տեսքով: GCAP, Civicus և Oxfam քարոզարշավների միջոցով հարկավոր է աշխարհի ղեկավարներին հիշեցնել, որ հազարամյակի նպատակների նվաճման համար նախատեսված ժամկետը արդեն կիսով չափ տևտևում է:
Քաղված է Globalactionforum (Համընդհանուր գործողությունների համաժողով) էլ. համընթաց

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐՏԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՕՐԵՆՍԻՐԱԿԱՆ ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

«Իրավական մշակույթի» էջերում պարբերաբար անդրադարձել ենք սոցիալական ապահովության քարտերի խնդրին: «Կիրառվում է այնքանով, որքանով նպատակահարմար է ունենում...» անդրադարձը («ԻՍ», 2007 թ. մարտի 15, թիվ 3 (6) վերաբերվում էր ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման «կատարմանը»:
Ի թիվ ալ պատճառների, պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների և մարմինների կողմից ՄՊ-ի 2006 թ. հոկտեմբերի 4-ի որոշման չկատարման հիմնական պատճառն այն էր, որ որոշման ընդունումից բխող անհավասար քայլեր ձեռնարկելու պատասխանատու դերակատարները՝ ՀՀ ՍԺ-ն և այնուհետև ՀՀ կառավարությունը, ըստ էության ոչինչ չձեռնարկեցին: Դրա համար կառավարությանը՝ օրենսդրական նախաձեռնություններ հանդիսատես զգալու, ՍԺ-ին՝ օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու և Նախագահին՝ օրենքները վավերացնելու համար պահանջվեց շուրջ 5 ամիս: Ընդ որում, ՍԺ-ն համապատասխան օրենքներ ընդունել է 2007 թ. փետրվարի 22-ին, իսկ հանրապետության Նախագահը դրանք վավերացրել է 2007 թ. մարտի 23-ին, այսինքն 30 օր հետո: Տեղին է նշել, որ ՍԺ-ի ընդունած օրենքների՝ Նախագահի կողմից վավերացման համար ՀՀ Սահմանադրությունը սահմանել է 21-օրյա ժամկետ (Չանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի ընդունած օրենքն ստա-

նալուց հետո քանակությամբ ժամկետում ստորագրում և հրապարակում է այն, հոդված 55.2):
Ուշադրության արժանի է եսկանց, իհարկե ՍԱԲՍ օրենքի փոփոխությունը և լրացումն է (մյուս օրենքների փոփոխությունները բխում են այս մեկից): Ինչպես և նախորդ՝ 2006 թ. մայիսի 23-ի փոփոխության դեպքում (Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «4. Սոցիալական քարտը հոգևոր խնդիրներին չի առնչվում և մարդու խնդիրն ու կրոնական համոզմունքների դեմ չի կարող օգտագործվել:»), որն, ինչպես ցույց տվեց իրավակիրառական փորձը (պրակտիկան) իրավական առումով ամենաթեթև էր, և փոփոխվեց 2007 թ. մարտի 23-ին, այնպես էլ վերջին փոփոխությունն ու լրացումն ի կատարումն ՄՊ-ի որոշման, թերի է:
Ինչու՞ն է խնդիրն այս անգամ:
Օրենքի հոդված 1-ը սահմանում է. «օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1.-րդ մասով»:
«3.1. Սոցիալական քարտից հրաժարվող քաղաքացուն, իր դիմումի հիման վրա, լիազորված մարմինը տրամադրում է տեղեկանք:
Տեղեկանքի ձևը և տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:
Օրենքի 9-րդ հոդվածը վերագրված է «Սոցիալական քարտ հատկացնել կամ

սոցիալական քարտ հատկացնել մերժելը»:
Սիմիլ լինելով փոփոխությունն այս վերանագիրը և հոդվածի բովանդակությունը համապատասխանում էին «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 40-ի պահանջներին: Կերտնապից պարունակում էր ամբողջական տեղեկանքություն հոդվածի կարգավորման առարկայի մասին. այն է՝ **քարտ հատկացնելը** և **քարտ հատկացնելը մերժելը**: Փոփոխության արդյունքում հոդվածի բովանդակության մեջ ավելացավ նոր կետ, նոր կարգավորման առարկայով՝ **քարտից հրաժարվելը**: Օրենսդրական տեխնիկան (ԻԱՄՕ, հոդված 40) պահանջում է, որ փոփոխություն կատարվի նաև վերնագրում:
Գուցե այս, մեղմ ասած, բացթողումը է-ական չթվա, սակայն ինչպե՞ս պետք է վարվել այն դեպքում, երբ քաղաքացին, հրաժարվելով քարտից, իրավասու մարմնին չի դիմում նաև տեղեկանք ստանալու համար: Արդյո՞ք նրա նկատմամբ ներգործության միջոցներ չեն կիրառվելու ..., թե՞ այո, կամ ինչպիսիք: ԻԱՄՕ հոդված 45.2-ը հաստատ սահմանում է. «Նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, ... որոնք չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն»: Փաստորեն, օրենքի 9-րդ հոդվածի փոփոխությունը խնդրին լուծում տալու փոխարեն նոր անպատասխան հարցեր է առաջացրել:

Քարտից հրաժարվող անձանց, համաձայն օրենքի, նախատեսվում է տրամադրել տեղեկանք՝ կառավարության սահմանած կարգով և ձևով: Այստեղ ևս առկա են որոշ հարցեր, որոնց պատասխանները գուցե տրվեն այդ տեղեկանքի ձևը և հատկացման կարգը հարցությանը ներկայացվելուց հետո: Ինչևէ, տեղեկանքը կհատկացվի դրա ստանալու համար դիմած քաղաքացուն կամ մեկ անգամ կամ՝ բազմաթիվ անգամներ՝ բազմաբնույթ նպատակներով (աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտ, սոցիալական ապահովության և ապահովագրության պետական ու ոչ պետական ծրագրերով նախատեսված կենսաթոշակ, նպաստ, փառատու շահագրավում, հարկեր, տուրքեր, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, ինչպես նաև պարտադիր այլ վճարներ վճարելու, բանկային հաշիվ բացելու ժամանակ) կիրառելու համար: Երկու դեպքերում էլ տեղեկանքը կիրառման ձևի (ֆորմայի) առումով հավասարադրվում է լինելու սոցիալական քարտին, կամ որ նույնի է՝ այն համարվում է անհատի համար իրավունքներ և ազատություններ վերապահող փաստաթուղթ:

Ստորև ներկայացված են ՄՊ-ի որոշման ապահովման նպատակով ընդունված մի շարք օրենքներում կատարված փոփոխությունները և լրացումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊՐԱՌՈՒԹՅԱՆ ԲԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 22.02.2007

Հոդված 1. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (24 սեպտեմբերի 2003 թվականի, ՀՕ-1-Ն, այսուհետ՝ օրենք) 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3.1.-րդ մասով.
«3.1. Սոցիալական քարտից հրաժարվող քաղաքացուն, իր դիմումի հիման վրա, լիազորված մարմինը տրամադրում է տեղեկանք:
Տեղեկանքի ձևը և տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:
Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածում՝
ա) 2-րդ մասն ուժից կորցրած ճանաչել,
բ) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված գործառնությունները իրականացնելիս սոցիալական քարտ չունեցող անձը ներկայացնում է սույն օրենքի 9-րդ հոդվածի 3.1.-րդ մասով սահմանված տեղեկանքը»:
Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում՝
ա) 1-ին կետը «քարտ» բառից հետո լրացնել «կամ սույն օրենքի 9-րդ հոդվածի 3.1.-րդ մասով սահմանված տեղեկանք» բառերով,
բ) 2-րդ կետը «քարտը» բառից հետո լրացնել «կամ սույն օրենքի 9-րդ հոդվածի 3.1.-րդ մասով սահմանված տեղեկանք» բառերով:
Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԵՆԱԳՐԱԳԻՎՈՒՄԻ ԱԿՏԻ
23.03.2007, ՀՕ-102

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՍՈՑԻԱԿԱՆ ԱՊՐԱՌՈՒԹՅԱՆ ԲԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 22.02.2007

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (6 դեկտեմբերի 1985 թվականի, այսուհետ՝ օրենսգրք) 169.8-րդ հոդվածում 3-րդ մասի «սոցիալական ապահովության քարտի համարը» բառերը փոխարինել «սոցիալական ապահովության քարտը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքը» բառերով:
Հոդված 2. Օրենսգրքի 198-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «համարի» բառը փոխարինել «կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի» բառերով:
Հոդված 3. Օրենսգրքի 198.2.-րդ հոդվածում՝
ա) 1-ին և 3-րդ մասերը «համարը» բառից հետո լրացնել «կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի վերաբերյալ» բառերով,
բ) 2-րդ մասը «նշելով» բառից հետո լրացնել «կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի վերաբերյալ նշում չկատարելով» բառերով,
գ) 3-րդ մասի «գործատուի» բառը փոխարինել «քաղաքացու» բառով,
դ) 4-րդ մասը «համարի» բառից հետո լրացնել «կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի» բառերով, իսկ «գործատուի» բառերը փոխարինել «պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց» բառերով,
ե) 5-րդ մասի «սոցիալական ապահովության քարտի համար» բառերը փոխարինել «սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանք» բառերով:
Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԵՆԱԳՐԱԳԻՎՈՒՄԻ ԱԿՏԻ
23.03.2007, ՀՕ-104

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԱՍԵՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 22.02.2007

Հոդված 1. «Պետական նպատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (24 հոկտեմբերի 2005 թվականի, ՀՕ-205-Ն, այսուհետ՝ օրենք) 22-րդ հոդվածում 1-ին մասի «զ» կետի «քարտի պատճենը» բառերը փոխարինել «քարտը կամ տեղեկանքը սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին» բառերով:
Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածում 1-ին մասի «զ» կետի «քարտի պատճենը» բառերը փոխարինել «քարտը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանք» բառերով:
Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԵՆԱԳՐԱԳԻՎՈՒՄԻ ԱԿՏԻ
23.03.2007, ՀՕ-105

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 22.02.2007

Հոդված 1. «Պետական կենսաթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (19 նոյեմբերի 2002 թվականի, ՀՕ-519-Ն) 42-րդ հոդվածի 1-ին մասում՝
ա) առաջին պարբերությունը «սոցիալական ապահովության քարտի» բառերից հետո լրացնել «կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի» բառերով,
բ) 8-րդ կետը «սոցիալական ապահովության քարտերի» բառերից հետո լրացնել «կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքների» բառերով:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԵՆԱԳՐԱԳԻՎՈՒՄԻ ԱԿՏԻ
23.03.2007, ՀՕ-106

Էջը պատրաստեց Ա. Պապիկյանը

ՄԵՇ ԴՆԱԳՔԸ ԿԻՐԱԿՆԵՐԻ ՈՍԿԵ ԵՂԹԱՆ

ԱՊՐԻԼԻ 1
Օճակագարը

ՀԻՍՈՒՍԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԵՍ

Երբ երուսաղեմին մոտեցան և եկան Բեթփագե, Չիթենյաց լեռան մոտ, այն ժամանակ Հիսուսը իր աշակերտներից երկուսին ուղարկեց ու նրանց ասաց. «Գնացե՛ք այդ գյուղը, որ ձեր դիմացն է, և այնտեղ կտնեք կապված մի էշ և նրա հետ՝ մի ավանակ. արձակեցե՛ք բերեք ինձ: Եվ եթե մեկը ձեզ բան ապի, կասեք, որ Տիրոջը պետք են. և նա իսկույն դրանք կուղարկի: Բայց այս բոլորը եղավ, որպեսզի կատարվի մարգարեի խոսքը, որ ասում է. Ասացե՛ք Սիոնի դստերը. Ես ասում եմ քեզ, որ ձեր քաղաքը ինչ է և նույն է ինչ և ավանակի վրա»:

Երբ երուսաղեմին մոտեցան և եկան Բեթփագե, Չիթենյաց լեռան մոտ, այն ժամանակ Հիսուսը իր աշակերտներից երկուսին ուղարկեց ու նրանց ասաց. «Գնացե՛ք այդ գյուղը, որ ձեր դիմացն է, և այնտեղ կտնեք կապված մի էշ և նրա հետ՝ մի ավանակ. արձակեցե՛ք բերեք ինձ: Եվ եթե մեկը ձեզ բան ապի, կասեք, որ Տիրոջը պետք են. և նա իսկույն դրանք կուղարկի: Բայց այս բոլորը եղավ, որպեսզի կատարվի մարգարեի խոսքը, որ ասում է. Ասացե՛ք Սիոնի դստերը. Ես ասում եմ քեզ, որ ձեր քաղաքը ինչ է և նույն է ինչ և ավանակի վրա»:

(Մատթ. 21:1-9)



...Եվ ասա մեծ երկրաշարժ եղավ, որովհետև Տիրոջ հրեշտակը երկնից իջնելով մոտեցավ, դռնից վե՛նը մի կողմ գլորեց ու նստեց նրա վրա:

Նրա տեսքը փայլակի նման էր, ու նրա զգեստը՝ սպիտակ, ինչպես ձյունը: Նրա ահից պահապանները խոտվեցին և մեռելների պես եղան... (Մատթ. 28:2-4)

ՄԵՇ ԴՆԱԳՔԸ շարունակող

ԱՎԱԳ ԸՄԱՐՈՐԸ նշանակում է մեծ շաբաթ, որովհետև Փրկչի Հարության շաբաթն է կամ յոթնյակը: Ավագ շաբաթվա վեց օրերը նվիրված են ավետարանական հիշատակներին.

երկուշաբթին՝ Չորացած թզեմուն, **երեքշաբթին**՝ Տասը կույտերին, **չորեքշաբթին**՝ Քրիստոսի կնոջ ձեռքով օծվելուն,

Ավագ հինգշաբթին՝ Սուրբ հաղորդության խորհուրդի հաստատման հիշատակին, երբ Հիսուս Վերնախանն օրհնեց հացն ու գինին և սովեց իր աշակերտներին, որպես իր մարմինն ու արյունը,

ուրբաթը՝ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻՆ, ԽԱՉԵՆԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐԱՆԸ,

շաբաթ օրը՝ նրազուլոյց է: Ապրիլի 7-ին, ժ. 18.00-ին, Հայաստանյայց Առաքելական բոլոր եկեղեցիներում **ճրագալույցի** Սուրբ պատարագ մատուցվեց, որի ընթացքում պահեք պահողները ս. հաղորդություն ստանալով դուրս եկան պահեցից, և ըսկվեցին գատակական տոնակատարությունները:

Ապրիլի 8-ին, ժ. 11-ին, **Տոնական պատարագ** մատուցվեց: Այդ օրը Հայ Առաքելական եկեղեցին Հայաստանում և ի սփյուռս աշխարհի մեջ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը: Հավատացյալները միմ-

յանց ողջունեցին «Քրիստոս Տարևա ի մեռելոց» ավետիսով, որի պատասխանն է «Օրհնեալ է Տարությանը Քրիստոսի»:

Սուրբ Հարության տոնը կոչվում է նաև Չատիկ, որը Փրկչի Հարությանը նվիրված մեծ տոնն է և նշանակում է, թե Քրիստոս գատվեց մեռելներից և Հարություն առավ. ինչպես նաև գատուն, բաժանուն, հեռացում մեղքերից և վերադարձն առ Աստված: Չատիկը թե՛ Հիմ, և թե՛ Նոր կտակարաններում համարվում է մեծագույն տոներից մեկը:

Քրիստոսի Հարությունը դարձավ քրիստոնեական վարդապետության և հավատի հիմքը:

Չատիկ տոնին մարդիկ ձու են ներկում: Չուն համարվում է հարության և նոր կյանքի սկզբնավորման խորհրդանշան: Իսկ կարմիր գույնը խորհրդանշան է խաչյալ Հիսուսի կենդանաբար արյունը, որ թափվեց մեր փրկության համար: Ս. Գրիգոր Տաթևացին ձուև կարմիր ներկելու մասին ասում է. «Միայն Չատիկն ենք ձու ներկում, որովհետև ձուն օրհնում է աշխարհի, և ինչպես իմաստուններն են ասում, դրսի կեղևը մեզն է երկնցին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշան է, որ աշխարհը գնվեց Քրիստոսի արյամբ: Եվ մե՛ք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ իռչակում ենք մեր փրկությունը»:

ՀԱՅՈՒՆ ԶԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆ ԿՐԻՐԻԻ 20-ԻՆ ԿՆԵՐԿԱՅԱՆՆ ՆՈՐ ՅՈՒՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ

ՀՀ ԳԱ ակադեմիայի Հայոց գեղասպանության թանգարանը Մեծ եղեռնի 92-րդ տարելիցին ընդհանուր առմամբ 20-ին կնեկայանա մեր ցուցադրությանը: Ինչպես «Արմենիան»-ի հետ գրույցում նշել է Հայոց գեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը, մասնակի փոփոխված ցուցադրությունը կընդհանրի մեր սյուժեները Մուսա լեռան հերոսամարտի, որբահավաք աշխատանքի, մշակութային գեղասպանության թեմաներով: Իսկ առաջիկա հինգ տարիների ընթացքում թանգարան-ինստիտուտը կաշխատի «գերմոր» ցուցադրության վրա, որը կառուցման հայեցակարգային առումով և ներկայացման ձևով, կլինի թվայնացված, ցուցադրության կըղովեն ոչ թե գրքերը կամ փաստաթղթերը, այլ դրանք սկայնացված տարբերակները:

Հարստացված ցուցադրությանը փորձ կարվի լիարժեք ներկայացնել Արևմտյան Հայաստանի կյանքը մինչև գեղասպանությունը, որպեսզի ավելի ընկալելի դառնա, թե ինչ ոչնչացվեց:

Թանգարան-ինստիտուտը նույնպես կունի կապեր հաստատել արտերկրի հայկական կազմա-քը մինչև գեղասպանությունը, որպեսզի ավելի ընկալելի դառնա, թե ինչ ոչնչացվեց:

Թանգարան-ինստիտուտը նույնպես կունի կապեր հաստատել արտերկրի հայկական կազմա-քը մինչև գեղասպանությունը, որպեսզի ավելի ընկալելի դառնա, թե ինչ ոչնչացվեց:

Թանգարան-ինստիտուտը նույնպես կունի կապեր հաստատել արտերկրի հայկական կազմա-քը մինչև գեղասպանությունը, որպեսզի ավելի ընկալելի դառնա, թե ինչ ոչնչացվեց:

Թանգարան-ինստիտուտը նույնպես կունի կապեր հաստատել արտերկրի հայկական կազմա-քը մինչև գեղասպանությունը, որպեսզի ավելի ընկալելի դառնա, թե ինչ ոչնչացվեց:

Թանգարան-ինստիտուտը նույնպես կունի կապեր հաստատել արտերկրի հայկական կազմա-քը մինչև գեղասպանությունը, որպեսզի ավելի ընկալելի դառնա, թե ինչ ոչնչացվեց:

Թանգարան-ինստիտուտը նույնպես կունի կապեր հաստատել արտերկրի հայկական կազմա-քը մինչև գեղասպանությունը, որպեսզի ավելի ընկալելի դառնա, թե ինչ ոչնչացվեց:



ոչ թե մեկ ընտանիքի, այլ մեր հավաքական հիշողության մի մասն է, որը վերականգնել է պետք: Փաստաթուղթ վերցնելն էլ ինքնանպասակ է. այն մշակվելուց և ուսումնասիրվելուց հետո պետք է «խոսեցվի» թանգարանի մեր գիտական ցուցադրության միջոցով. ասել է թանգարան-ինստիտուտի տնօրենը:

Բոլոր մասնագետները աշխատանքները կատարվեն պետությունից հատկացվող միջոցներով, բայց, Հ.Դեմոյանի հավաստածով, ջանքեր չեն խնայվի, որպեսզի խճիղների լուծմանն ուղղվեն նաև արտաքույցետային միջոցներ: Նախատեսվում է ըստեղծել «Հայոց գեղասպանության թանգարանի բարեկամներ» հիմնադրամ:

Ըստ Հ.Դեմոյանի վիճելի, անհեղինակ, ամհացեց նյութ չի ցուցադրվելու թանգարանում: Պետք է փոխվեն ցեղասպանության ստանդարտ ընկալումները, նյութի վաճառքում եղանակը պետք է դիզայններական տեսք ստանա ժամանակակից թանգարանագիտության մեջ ընդունված ձևով:

Թանգարան-ինստիտուտը նույնպես կունի կապեր հաստատել արտերկրի հայկական կազմա-քը մինչև գեղասպանությունը, որպեսզի ավելի ընկալելի դառնա, թե ինչ ոչնչացվեց:

Թանգարան-ինստիտուտը նույնպես կունի կապեր հաստատել արտերկրի հայկական կազմա-քը մինչև գեղասպանությունը, որպեսզի ավելի ընկալելի դառնա, թե ինչ ոչնչացվեց:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Բ Ա Մ Ա Շ Ի Ր Ա Ն Ե Կ Ա Մ Խ Ա Ղ Ա Ռ Ա Ն Ն Կ Ա Ն Ո Ն Ե Տ Ի Ի

Հարազատներից դուք մեկնելու հրավեր եք ստացել՝ վիզա: Չանգահարում եք հյուպատոսություն, հեթոթազրվում ընդունելության համար: Վրա է հասնում երկար սպասված օրը, շտապում եք համկարծ ու չուշանք ընդունելություն: Դուք հանգիստ եք, այլալվելու բան չկա, փաստաթղթեր կարգին են: Դուք, որ հարազատների հրավերով մի քանի անգամ եղել եք արտասահմանում, ձեզ ավելի հանգիստ եք զգում, քան առաջին անգամ հյուպատոսություն եք այցելողը: Բազմիցս եղել եք հյուպատոսությունում, կով տիրապետում եք ֆրանսերեն լեզվին, քանզի ինչ որ ժամանակ ավարել եք Ֆրանսիայում:

Ընդունարանում հանձնում եք փաստաթղթերը, ֆրանսերենով լրացնում քարտը: Հյուպատոսության աշխատակիցը պատուով ու ձեռք փաստաթղթերը:

-Վկայական ինչու՞ չէ ֆրանսերեն,- հայերենով հարցնում է

այդ չինովհիվ:
-Ես հենց հիմա կթարգմանեմ (ձեզ համար դա դատարկ բան է, թույլե՞սկան գործ):

-Դե՛ կալ... պետք չէ,- պատասխանում է աշխատակիցը:
«Եթե հարկավոր չէ, ինչու՞ եք հարցնում»,- մտածում եք դուք: Հետո ձեզնից 28000 դրամ են վերցնում «համապատասխան» ծառայության համար:

Անցնում են շաբաթներ, դուք դեպատասխանում մտ եք: Ձեզ արդեն թույլ չեն տալիս շենք մտնել: Դուք պետք է պատասխանի սպասեք փողոցում: Վերջապես ճարտարներով ձեզ մի թղթակտոր են հրամցնում, որի վրա մանրիկ տառատեսակով, **մերժված է** բառի դիմաց, փոքրիկ խաչ է արված: Իսկ ո՞րք է մերժման պատճառը,- հարցնում եք դուք: Բացառություն չտալով, չինով-

ԱՅԳԱՍԿՈՒՄ Է ԸՆԹՅՐԹՈՂ
Մարդկային տեսակետից, մեղմ ասած, դա քամահարում է Հայաստանի քաղաքացու ընկալումը: Չպատասխանել հարցին, պարզապես չըջվել ու զնալ, իրք, ձեռ հավե՛ր չունենք: Երկու կողմերին, որոնցից մեկը սուս-ծանու է մի ցանկապատ է բաժանում սահմանը Հայաստանի ու Ֆրանսիայի միջև: Եվ այդ սահմանը կալ պաշտպանում է ընդունվողին, որը որոշել է, թե ինքը պարտավոր չէ ձեռ հարցին պատասխանել: Հայաստանի քաղաքացու 28000 դրամ են վերցրել ու որոշել, որ

պատասխանել այն հարցին, թե ինչու է մերժվել, ծառայությունների մեջ չի մտնում: Այնպիսի զգացում ես ապրում, թե գործ ես ունեցել ոչ թե հյուպատոսության ծառայողի (չինովհիվ), այլ մատուց շինողների հետ:

Իսկ իրողությունը ինչպե՞ս է դիտարկվում իրավաբանական տեսակետից: Ուզածդ գործարք, պայմանագիր՝ քաղաքացիների կամ պետությունների միջև, պետք է որևէ հիմք, կանոն ունենա: Լակիքան ձեռնարկելը, գործարք, պայմանագիր կնքելը, կողմերը պիտի ծանուցվեն կանոնների: Առավել ևս այն մարդը, ով Հայաստանի քաղաքացի է և կարող է թռչապառու լինել, ում համար 28000 դրամը իր եռամսյա թռչան է, ու դվկար թե ուզենա այդ փողերը քանում տալ: Եվ ինչու՞ է քարտը միայն

ֆրանսերեն լեզվով և ոչ հայերեն: Հետաքրքիր է, թե ինչ կանոններ են գործում Ֆրանսիայի Հայկական հյուպատոսությունում: Այնպիսի պահանջում են հայերեն՝ լրացնել քարտը, փող են վերցնում, հետո մերժում Հայաստան մեկնելը ոչինչ չբացատրելով: Անհեթեթ է ինչու, ճի՞շտ է: Ֆրանսիացին բա կտանի՞ քամահարաբը...
Եվ էլի: Իսկ ինչպե՞ս հասկանալ երբ Ֆրանսիա մեկնող ու հաստատ վերադարձի միտք չունեցող երիտասարդ ընտանիքին թույլտվություն են տալիս, իսկ մրան, ով մի քանի անգամ եղել ու վերադարձել է, մերժում են: Ինչ-որ պտոր ջրի հոս է գալիս... Ու՛մ է ձեռնտու դա, հյուպատոսության աշխատակիցների՞ն: Հնարավոր է, բայց ոչ պետությանը... որի գերեցիկ եռաբույրը դրանից հետո կարող է խամրել իրաքափված քաղաքացու աչքերում:

ՈՒՖԱՅԵԼ ՄՈՎԱԽՅԱՆ

Ը Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ե Ն Ե Տ Ի

Անվճար իրավական խորհրդատվություն

Հարգելի ընթերցող,
«Սահմանադրական օրինականության ամրապնդումն մարդու իրավունքների պաշտպանության միջոցով» ծրագրի շրջանակներում ՀԱԻԿ-ը իրականացնում է **անվճար իրավաբանական խորհրդատվություն:**


Ձեզ հուզող հարցերով դուք կարող եք դիմել՝ այցելելով ՀԱԻԿ գրասենյակ, կամ դիմումներն առաքել նամակով, ֆաքսով, ինչպես նաև էլեկտրոնային փոստով՝ apapikyan@acrpc.am:

Դիմումների վերաբերյալ կտրվեն գրավոր կամ բանավոր խորհրդատվություններ, իսկ հասարակական հնչեղություն ունեցող հարցերի վերաբերյալ համապատասխան նյութեր կտպագրվեն նաև «Իրավական մշա-

կույթ» երկշաբաթաթերթում: Գրասենյակում խորհրդատվություններ մատուցվում են բոլոր աշխատանքային օրերին՝ երկուշաբթի-ուրբաթ, ժամը 9.30-ից 17.30:

Մեր հասցեն է՝
p. Վանաձոր, 2002,
Շիրակյացի I նրբանցք, թիվ 2,
հեռ.՝ 0322 2-29-67,
ֆաքս՝ 0322 4-47-81,
էլ. փոստ՝ acrpc@acrpc.am,
lc@acrpc.am, apapikyan@acrpc.am

Ծրագիրն իրականացվում է Բաուներիաբո ինքնինչևել (CPICASP-ի, ԱՄՆ ԱՉԳ-ի և ԳԿԾԱԿ) կազմակերպության աջակցությամբ:



Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի Մարդու իրավունքների հայկական դպրոցը հայտարարում է ընդունվելություն հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման 2007-2008թ. սեկտեմբեր 1-ից համար (Եվրոպական Հանձնաժողովի օժանդակությամբ): Դասընթացը կազմակերպվում է ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի հետ համագործակցությամբ:

Դասընթացի առաջին հավաքը կկայանա 2007թ. հունիսի 15-ից հուլիսի 4-ը:

Դասընթացի նպատակը «Իրավունք» առարկայաչարի («Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք») ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացումն է՝ տեսական գիտելիքների և մեթոդական հմտությունների բարելավման միջոցով:

Ուսանողները պարտավորված են անհրաժեշտ գրականությանը, օգտվում ՀԱԻԿ Մարդու իրավունքների գրադարանային ցանցի ծառայություններից:

Դպրոցը հաջողությամբ ավարտելու դեպքում սովորողը ստանում է «Իրավունք» առարկայաչարի մասնագետի որակավորման վկայական:

Ընդունվելությունը կատարվում է մրցութային կարգով:

Դիմել կարող են
Հանրակրթական դպրոցի այն ուսուցիչներ, ովքեր
* դասավանդում են «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսումնական առարկաները,
* սկսած 2007-2008թթ. ուս. տարվանից՝ առնվազն 2 տարի պետք է դասավանդեն «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսումնական առարկաները:

ՀԱԻԿ-ը հոգում է հետևյալ ծախսերը:
1. Բնակավայր-Վանաձոր (ՀԱԻԿ-ի գրասենյակ), Վանաձոր-բնակավայր ուղեվարձերը (վճարման համար հիմք են հանդի-

սանում ուղեկտրոնները),
2. Սնունդ,
3. Կացարան:
Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.
- Դիմում-հարցաթերթիկ,
- Ուսումնական հաստատության ղեկավարի կողմից լրացված հարցաթերթիկ-երաշխավորագիր,
- Ինքնակենսագրություն (CV),
- ԲՈՒՀ-ի դիպլոմի պատճեն,
- Հարակից այլ դասընթացների (սեմինարների) վկայականների պատճեններ (եթե կան),
- Անձնագրի պատճեն,
- 3/4 չափի մեկ լուսանկար (ֆաքսով և էլ.փոստով ուղարկված լուսանկարներ չեն ընդունվում):
Փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում դիմումը չի քննարկվում:
Դիմում-հարցաթերթիկ և հարցաթերթիկ երաշխավորագրի ձեռքի կարտի է ծանոթանալ՝ այցելելով www.acrpc.am ինտերնետային էջ:
Փաստաթղթերը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան մինչև 2007թ. մայիսի 4-ը, հետևյալ հասցեով՝
Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, Շիրակյացի I նրբանցք, թիվ 2 Դեռախոս՝ (322) 22967, 44781 Բաքս՝ (322) 44781
Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am, apapikyan@acrpc.am
Լրացուցիչ տեղեկություններ կարող դիմել Կրթության բաժնի վարիչ **Արայիկ Պապիկյանին:** apapikyan@acrpc.am

Իրավունք
Վճարվում է
ՈՒ Ե Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ե Ն

Հարգելի բարեկամներ, տեղեկացնում ենք, որ «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթը այսուհետ հնարավորության սահմաններում պատրաստ է անվճար տպագրել հասարակական կազմակերպությունների, կրթական և առողջապահական հիմնարկների, մշակութային օջախների, այլ պետական և ոչ պետական հաստատությունների, ինչպես նաև քաղաքացիական նախաձեռնությունների ապաքաղաքական և շահույթ չհետապնդող հայտարարությունները:

Թերթի խմբագրականը առաջարկում է համագործակցել հանրապետությունում, մասնավորապես, Ձեր իսկ մարզում, քաղաքում, գյուղում, աշխատավայրում և կրթական հաստատություններում ծառայած՝ քաղաքացիների հուզող իրավական, նաև սոցիալական տարբեր խնդիրներն ու հիմնահարցերը լուսաբանելու համար:

Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Հետաքրքրական և ուշադրավ նյութերը տեղ կգտնեն թերթի էջերում, իսկ հեղինակներին կվճարվեն հոնորարներ:

Սպասում ենք Ձեր հորվածներին, ակնարկներին, տեղեկատվությանը (ցանկալի է նյութերն ուղարկելն էլեկտրոնային փոստով):

«Իրավական մշակույթ»-ի խմբագրական

Թերթը իրատարակվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ: Երկշաբաթաթերթի բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական միության դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության 9 ամսի Հիմնադրի և իրատարակիչ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2002, ք. Վանաձոր, Շիրակյացի I-ին նրբ., թիվ 2
Հեռ.՝ (+374 322) 2-29-67
Բաքս՝ (+374 322) 4-47-81
Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am Համացանցի էջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագիր՝ Հրայր ԱՐՈՒԽԻԱՆ
Խմբագիր՝ ԱԼԵՎ ՍՈՒՌԻԱՆԵՅՆ
Համակարգչային ձևավորող՝ Նարինե ԱՉԱՐՏԱՆ
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակների չեն վերադարձվում: Մեքենայի վրա անելիս կամ արտատպի հոլում «Իրավական մշակույթին» պարտադիր է:

Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Շաբաթը 2 տպագրական ամիս:
Ստորագրված է **Սպագրության 16.04.2007 թ. Սպասանկը՝ 2000:**
Տպագրվել է «Չափազանց» հրատարակչատանը:

Իրավական մշակույթ
Legal Culture
Праваед культура
Տարածվում է անվճար